



Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճեննել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ԲԱՆԳՈՐԸ-ԳՅՈՒԴ, Ո.ՑԻ.Ա.Ա.Ա.Ա.Ա.  
ԳԵՐԱԼՐՎ. ԵՍԱՎԿՈՒՆ ԳՐԱԳՈՐԸՆ

№ 15

Քաղաքական Խուսափորության  
Գլխավոր Վարչություն

№ 15

ԹԱՐՄԱՆԵԿԱՆ  
ՊԱՏՐԱՎԱԾԱԾՔՆԵՐԸ  
ՊՐԱԿ ԱՌԱՋԻՆ

ԵՎԱԿԱՆ ՀՐԱՄԱՔՐԿՉՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ 1929



ԲՈՆՎԱ-ԳՅՈՒԴ. ԳԵՐԱՄՐՎԵՍՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԳԼԻԱՎՈՐ

№ 15

ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ


№ 15

ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ

# ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐ

ՊՐԱԿ ԱՌԱՋԻՆ

A T 8229



Հր. № 945. Դրառնագար № 1738 (ր). Տիրաժ 2000  
Պետքատի առաջին տպարան Վաղարշապատում  
Գատվեր № 51

ՄԱՔՍԻՄ ԳՈՐԿԻ  
(Ռուսաստան)

ՊԵՇԿՈՎԸ

1.

— Ալեքսեյ Մաքսիմիչ, հրամանատարներ ենք, առանց զինվորների, — կատակի տվեց Ալեքսեյի ընկերը: — Ի՞նչ կա այստեղ: Գնանք ծովի վրա, հը<sup>՞</sup>...

Գնացին Վոլգայով, առաջ գնացին մարդատար շոգենավով, ապա բեռնակիրով, նավաստիների հետ: Յոթ որից հետո, արդեն նրանք կապից ծովի մոտերքում ելին, ձկնորսների մի փոքր արտելում:

Ինչ վոր աշխատում ելին, այն ել ուտում ելին. իսկ մինչ արդ, ցուրտը վրա լեր հասնում.

Ընկերներից բաժանվելով, Ալեքսեյն սկսեց առաջանալ գեղի հյուսիս: Տեղադրությունը կնում, տեղադրությունը եր ձմերուկ ծախողների սալակներով:

Դոբրինկա կա կայարանում Ալեքսեյի բախուր բանեց. նրան տվեցին գիշերալին պահակի աշ-

խատանք, բեռներ պարունակող բակում։ Նա պիտի հակեր յերեկոյան ժամի վեցից մինչև առավոտյան ժամի վեցը, պահպանելու համար տոպրակները, բրեղենաները և փայտը՝ տեղական բնակիչների հավշտակումներից։

Մի անգամ այնպես պատահեց, վոր նա աշնանալին մութ դիշերով պետք ե հոկեր ալլուրի պարկերի մի մեծ կուտի։ Յեղանակն սկսեց վատանալ։ Փշում եր ցուրտ քամի և թափվում եր հորդ անձրև։ Տափաստաններում դիշերներն անթափանց ե, ինչպես ու թանաք։

Հանկարծ քամին պոկեց ալլուրի պարկերի վրա ամրացված բրեղենտը։ Վոչինչ չեր կարելի անել. պետք եր բարձրանալ բեռի վրա և պարկերը ծածկել։ Յեվ ահա, յերբ Ալլոշան բարձրացավ բեռի վրա, քամին գլորեց նրան, խճճեց բրեղենտի մեջ և զցեց ներքեւ։ Նա այնքան ուժեղ կերպով կպավ ոելսերին, վոր դիտակցությունը կորցրեց։ Իսկ հետո, ամբողջ վիզն այնպես եր ցագում, վոր նա հազիվ եր կարողանում շունչ քաշել։ Վիրահատությունից հետո, առաջին շրջանում նա վոչինչ խոսել չեր կարող։ Միայն յերեք շաբաթ հետո սկսեց խոսել, այն ել շշուկով կարծում եր, թե ձայնը բոլորովին կորցրել ե, բայց չորս ամիս անց սկսեց խոսել, սակայն վոչ թե առաջվանման, այլ ավելի բամբ ձայնով։

Խոսելը՝ կարող ես նաև չխոսել, բայց պահակություն անել ե պետք։ Փայտը ձեռքիդ շըրջիր բեռների շուրջը։ Տափաստանից փչում ե քամին, բերում ե ձյան շեղջեր...

Իսկ յերբ Ալլոշան անքուն գիշերից հետո, պահակատեղից ազատվում եր, կայարանապետի խոհարարուհին հարկադրում եր նրան լվացքը կը ել, փայտ ջարդել ու սղոցել, մաքրել պղնձե ամանները, վառել վառարանները, խնամել ձիերին և անել դեռ ուրիշ շատ բաներ, վորոնք կլանում ելին որվա կեսը, կարդալու կամ քնելու համար ժամանակ չթողնելով։

Ալլոշան սպասում եր գարնան։ Ձմրան գիշերներին, պահակության ժամանակ, շարունակ ավելի և ավելի բոցավառվում եր նրա մեջ մի ցանկություն. — տեսնել ամեն տեղ, տեսնել, թե մարդիկ ի՞նչպես են տպրում, ի՞նչ ժողովուրդ ե տպրում իր շուրջը։

Գրքերը նրան շարունակ պատմել ելին ուժեղ և բարի հերոսների մասին, իսկ կյանքում նա շարունակ տեսել եր կոպիտ անասունների։ Պետք եր գիտենալ, ինչն ե ճիշտ, ինչը՝ սռւառ

Հենց վոր ձյունն սկսեց հալչել, Ալլոշան հեռացավ կայարանից և սկսեց թափառել Ռուսաստանի ճանապարհներով։ Անցավ Դոնը, Վոլգան, Ուկրաինան, լեղավ նաև իր հալրենի քաղաքում — Նիժնիյում։

Հետեւալ գարնանն արգեն, Ալլոշան Ռեկ-  
րախնայով անցավ Բեսսարաբիա։ Ալլոշալին վոչ վոք  
փող չեր տալիս, ուստի և նա հաճախ սովածա-  
նում եր։ Աշխատում եր՝ վորտեղ վոր հանդիպեր։  
Փող եր աշխատում ե տռաջ։ Սպառփում եր ամ-  
բողջ պաշարը—նորից կանդ եր առնում աշխա-  
տելու։

Բեսսարաբիայում Ալլոշան լեզավ խաղող հա-  
վաքելու ժամանակը։ Աշխատանքը լավ եր, ժա-  
ղավուրդը հրաշալի։

Մի անգամ, յերեկոյան, որվա աշխատան-  
քից հետո բոլորը յերդով ու ծիծաղով զնացին ծո-  
վափ։ Ալլոշան մնաց խաղողի թփերի խիտ ստվեր-  
ների տակ։ Նրան մոտեցավ պառավ մոլդավունի  
Իզերգիլը։

— Դու ինչու չփնացիր նրանց հետ, զլո խը  
կուցնելով հարցրեց նա։

— Չուզեցի, — պատասխանեց Ալլոշան։

— Ու... Դուք, ուստաներդ, ծերացած եք  
ձնվում։ Մոալ մարդիկ եք։

Ծովի կողմից գալիս ելին մաքուր, ուժեղ և  
հնչուն ձայներ։

— Լսել ես զու արդյոք, վոր ուրիշ վորեն  
տեղում ալսպես յերգելին, հարցրեց Իզերգիլը,  
զյուխը բարձրացնելով և անտառամ բերանով ծի-  
ծաղելով։

— Զեմ լսել: Յերբեք չեմ լսել, — շահնջաց  
Ալլոշան հիացմունքով:

— Յեզ չես լսի: Մենք սիրում ենք յերգել:  
Մենք սիրում ենք ապրել: Նայիր, միթե ամբողջ  
որը չեն հոգնել նրանք, ովքեր յերգում են: Ար-  
շալուխից մինչև վերջալում աշխատել են. դուքս  
յեկավ լուսինը, և ահա՝ յերգում են: Ահա՝ ինչ-  
պես պետք ե ապրել:

Ալլոշան հիշում եր իր յերիտասարդությու-  
նը, ծանը, անտանելի կյանքը և ամբողջ հոգով  
նախանձում եր այդ տաք յերկրի ուրախ և ու-  
ժեղ մարդկանց:

Հետեւալ որն աշխատանքը վերջացավ և  
Ալլոշան նորից ճանապարհ ընկավ: Սնցնելով Բես-  
սորաբիան, նա հասավ Դանուբ գետին:

Մի անգամ նա գիշերեց Սև ծովի ափին,  
զնչուների վրանների մոտ: Ծովից փչում եր  
սառը քամին, վոր բորբոքում եր խարուցկը: Դե-  
պի ձախ անսահման տափաստանը, դեպի աջ՝  
անվերջ ծովը, իսկ խարուցկի մոտ՝ ծեր զնչու  
Մակար Զուղբան: Նա հսկում եր իր ցեղի հան-  
գստին և խօսում եր Ալլոշալի հետ: Այն, վոր  
Ալլոշան յեկել եր հեռավոր Ռուսաստանից, բոլո-  
րովին չեր զարմացնում նրան:

— Ալսպես, դու գնում ես, — տսում եր նա, —  
դա լավ ե... Դու քեզ համար փառավոր ուղի յես

ընտրել, բաղե։ Այդպես ել պետք եւ։ Շըջիր և դիտիր։  
Դիտեցիր պրծար—պառկիր մեռիր։ Ահա և ամ-  
բողջը։ Նալիր, յես ահա հիսունութ տարեկան եմ  
և այնքան բան եմ տեսել, վոր յեթե արդ բոլորը  
դրվեր թղթի վրա, թուղթը հերիք չեր անի։ Ս-  
պա ասա, վճրաեղ չեմ յեղել յես։ Այդպես պետք  
և ապրեր։ Գնա, գնա, — ամեն ինչ դրանումն եւ։

Յեվ ծիրունի գնչուն, անուղղելի թափա-  
ռաշըջիկը, յերկար պատմում եր Ալլոշալին զա-  
նազան պատմություններ, հարկադրելով նրան  
միշտ հիշել այն մասին, վոր մարդ իր դարը պիտի  
ապրի թոշունի պես ազատ։

Վերադարձի ճանապարհին, Ալլոշան չեր հե-  
ռանում ծովից։ Ապրում եր ձկնորսների հետ,  
բայց ելի դժվարությամբ եր կարողանում փող  
աշխատել։ Ամբողջ հարավալին ափով թափառում  
ելին բոսյակները։ Նրանց տալիս ելին ամեն տե-  
սակի աշխատանք, սակայն զղջում ելին, տես-  
նելով նրանց անհանդիս բնավորությունը։

Հասնելով Ողեսսա, Ալլոշան բոսյակների մի  
խմբի հետ զբաղվեց նավահանգստի նավերը բեռ-  
նավորելու գործով։ Խարիսխների շղթաների  
հնչունները, բեռներ բերող վագոնների աղմուկը,  
շոգենավերի սուլոցները, նավաստիների և բեռ-  
նակիրների աղմուկը,— ամբողջը վերածվում ելին  
աշխատանքալին որվա մի խլացուցիչ յերաժշտու-  
թյան։ Յեվ արդ բոլորի մեջ Ալլոշան նկատեց

մի մարդու, վորի հետ վիճակված իր հետագալում բավական մոտիկ ծանոթանալու:

Նա հագել եր նոր ձեփի կոստյում և սև գըլ-խարկ, ձեռքում ձեռնափայտ: Ի՞նչ եր անումնանավահանգստում, Ալլոշալին անհասկանալի լեր: Նրա նույնիսկ ներկայությունն անհասկանալի լեր այնուեղ, նավահանգստում, շոգենավերի սուլոցի, շղթաների ձախերի և բանվորների աղմուկների միջև: Բոլորը մտահոգված եին, հոգնաբեկ, բոլորը վազում եին փոշու միջով, աղմկում եին, հայուսում, իսկ այդ կերպարանքը, հենց այդտեղ, դանդաղ շրջում եր մեռելալին տիսուր դեմքով, ամեն ինչի հանդեպ ստոնասիրտ, ամեն ինչին ոտար:

Ալլոշալին դուր լեկավ անծանոթը, բայց իրեն՝ բույակի կոստյումով, բեռնակը փալաննուսին և ածուխի փոշու մեջ կորած՝ դժվար եր խոսակցության հրավիրել այդպիսի մի ֆրանտ մարդու:

Ծանոթությունը կատարվեց անսպասելի: Նրանից մի քիչ հեռու, հաց և ձմերուկ վերցնելով, նստեց Ալլոշան և ապա զարմանքով նկատեց, վոր անծանոթն իրեն ե նայում անթարթ, ագահությամբ նայելով նրա համեստ ճաշին: Արագորեն չորս կողմը նայելով, Ալլոշան նրան կանացուկ հարցրեց.

— Ուտել ուղնում եք:

Նո ցնցվեց, բաց արեց սպիտակ տտամները  
և նույնպես սկսեց կասկածանքով նայել: Այն  
ժողովանակ Ալյոշպն մեկնեց նրան կես ձմեռուկ և  
մի կտոր հաց: Նա հափշտակեց ալդ և անհետա-  
ցավ ապրանքների կուտերի լեռեռում: Յերբեմն  
ալգտեղից յերեռում եր նրա զլուկը, ծոծրակի  
վրա թեքած զլխարկով: Նրա զեմքը փալում եր  
լայն ժպիտից, և նա, չդիտես ինչու, նայում եր  
Ալյոշային, վոչ մի վայրկյան չդադարելով ծանհ-  
լուց:

— Շնորհակալ՝ շատ, շնորհակալ... — նա խփեց  
Ալյոշայի մեջքին, ապա բռնեց նրա ձեռքը, սեղ-  
մեց և սկսեց ցնցել: Հինգ բոպե անց, նա արդեն  
պատմում եր Ալյոշային իր մասին:

Նա վրացի յեր: — Կնյագ Շաքրո Աթածի,  
կոմիտասի մի հարուստ կտրվածտիրոջ վորդի: —  
Նա ծառայել եր Անդրկովկասի յերկաթուղարին  
զրասենյակներից մեկում: Ծնկերը, վորի հետ միա-  
սին նա ապրում եր, անհետացել եր, կողոպտե-  
լով նրան: Շաքրոն ընկել եր նրա յետելից: Իմա-  
նալով, վոր նա Բաթում և գնացել, Շաքրոն ևս  
ուղեռորմել եր այստեղի Բաց Բաթումում պարզ-  
վել եր, վոր ընկերը զնացել եր Ռդեսսա: Շաքրոն  
վերցրել եր ոտար անցագիր և նույնպես յեկել  
Ռդեսսա: Ծնկերոջը նո չեր զտեր, ամբողջ ունե-

ցած փողը կերել եր և ահա, . արդեն յերկրորդ  
որն եր, վոր վոչ մի կտոր բան չեր կերել:

Դրությունը բարդացավ: Ալլոշան վորոշեց,  
վոր կաշխատի, վորպեսզի գնի նրա համար մի  
տումս, մինչև Բաթում: Բայց ավաղ... բանից դուքս  
յեկավ, վոր դա շատ շուտով գլուխ բերել չեր  
կարելի, վորովհետեւ Շաքրոն ուտում եր յերեք  
մարդուց ավելի շատ: Որական ութուն կողեկ  
աշխատավարձից նրանք յերկուսով ուտում ելին  
վաթուն կողեկը: Միևնույն ժամանակ պետք  
եր նաև մտածել մոտեցող ձմեռվա մասին: Ողես-  
սալում մնալն այլևս անհնարին եր նրանց հա-  
մար: Այն ժամանակ Ալլոշան կնյազ Շաքրովին  
առաջարկեց վոտքով գնալ, հետեւալ պարմաննե-  
րով: — յեթե Ալլոշան նրա համար չգտավ ուղե-  
կից մինչև Թիֆլիս, ապա ինքը կուղեկցի նրան,  
իսկ յեթե գտավ՝ ինքը կզնա իր ճանապարհով:

Յեվ ահա, յերկու ճանապարհորդներն Ողես-  
սալից ուղևորվեցին Թիֆլիս:

## 2.

Ողեսսալից նրանք գնացին Նիկոլայև: Աշխա-  
տանք չկար: Գնացին Խերսոն: Յերբ Ալլոշան  
կերակրում եր իր ուղեկցին, նա շատ ուրախ  
եր լինում և շատախոսում եր, առանց լոելու:  
Վերջանում եր փողը՝ և Շաքրոն ընկնում եր

թախծոտության մեջ։ Այժմ նրա բոլոր պատմություններն այն մասին ելին, թե ինչպես եր նո ուտում կովկասում։ Բանից դուքս լեկավ, վոր նո նախաճաշին՝ ժամի տամներկուսին՝ ուտելով մի «փոքրիկ գառ» և խնելով յերեք շիշ զինի, ժամի յերկուսին կարող եր առանց վորեե դժվարության ուտել յերեք ափսե «չախոխբիլի» կամ «չխրթմա», մի սինի փլավ, մի շամփուր խորոված, «ինչքան ուզես» տոյմա և գեռ ուրիշ շատ կովկասան խորտիկներ։ Յեվ միեսույն ժամանակ նո կխմեր այնքան զինի, «ինչքան ուզեր»։ Նա ողատմում եր վառվող աչքերով, ատամները կրծքացնելով և թուքը կուլ տալով։

Յերբ Ալզոշան կարողանում եր վորեե բան աշխատել և կիսել ընկերոջ հետ, Շաքրոն շատ դոհ եր մնում։ Կնյաղն ասում եր, վոր ինքը նույնպես կսկսի աշխատել և վոր փող կաշխատեն ու ծովով կզնան Բաթում։ Բաթումում նա շատ ծանոթներ ունի, վորոնք Ալզոշալի համար անմիջապես կգտնեն ծառալի կամ դոնապանի պաշտոն։

Նորից վերջացան բոլոր փողերը և վոչ մի աեղից փող ճարել չեր լինում։ Պետք եր գնալ Թեոդոսիա, վորտեղ այդ ժամանակ սկսել ելին նավահանգստի կառուցումները։

Բայց ահա, ճամբորդները գնացին Պերեկոպ,

Սիմֆերոպոլ և ուղևորվեցին դեպի Յալթա։ Ալլո-  
շան գնում եր ծովից շուրջած այդ մի կտոր հողի  
առջև լուռ հիացմունքով։

Մի անգամ, Յալթայի մոտերքում, Ալլոշան  
գործի անցավ կտրտված ճյուղերից մի մրգի այգի  
մաքրելու և փողն ստանալով, գնեց հիսուն կո-  
պեկի հաց և միս։ Յերբ նա իր գնածը բերեց  
ընկերոջը, այգեպանը կանչեց Ալլոշային և նա  
գնաց, թողնելով իր գնածները Շաքրովի մոտ,  
վորն աշխատելուց հրաժարվել եր, պատճառա-  
բանելով գլխացավը։

Մի ժամից հետո վերադառնալով, Ալլոշան  
համոզվեց, վոր Շաքրոն խոսելով իր ախորժակի  
մասին, ասել եր ճշմարտությունը։ — գնածներից  
նույնիսկ փշրանք չեր մնացել։ Դա ընկերական  
վերաբերմունք չեր, բայց Ալլոշան ձայն չհանեց  
և իզուր, ինչպես յերևաց հետագայում։ Շաքրոն  
տեսնելով ընկերոջ լուռթյունը, նրանից ոգտվում  
եր իր ուղածի պես։ Այդ որվանից սկսվեց ինչ-  
վոր անհաճո բան։ Մեկն աշխատում եր, իսկ  
մյուսը զանազան պատճառաբանություններով,  
հրաժարվում եր աշխատելուց, ուտում եր, խմում  
և քնում։ Ալլոշային ծիծաղ և ցավ եր պատճա-  
ռում այդ առողջ ջանելի վրա նայելը։

Կնյազը սովորել եր մուրացկանություն ա-  
նել։ Յեվ նա սկսում եր մուրալ։ Յերբ նրանք

պետք ե անցնելին թաթարական գլուղակներով։  
Շաքրոն սկսում եր մուրալու նախապատրաս-  
տություն տեսնել։ Դրա համար նա հենվում եր  
ձեռնափայտի վրա և վոտքը քարշ եր տալիս  
դեանով, իբրև թե ցավում եւ նա զիտեր, վոր  
թաթարները վոզորմություն չեն տա առողջ յե-  
րիտասարդին։ Ալլոշան վիճում եր նրա հետ, ա-  
պացուցելով, վոր ամոթ ե այդպիսի բանով զբաղ-  
վելը։

— Յես չեմ կարող աշխատել, — կարճ պա-  
տասխանում եր Շաքրոն։

Շաքրոն սկսել եր շտապեցնել Ալլոշալին,  
վոր գուրս գան Ղրիմից, վորովհետեւ արդեն ա-  
շուն եր և գեռ շատ ճանապարհ ունելին անց-  
նելու։

Ալլոշան համաձայնվեց նրա հետ։ Յեվ նրանք  
գնացին թեոդոսիա՝ փող աշխատելու։ Գնում ելին  
ծովափով։

Կերչ գնալիս, արդեն նրանք ճանապարհը  
շարունակեցին վոչ թե ծովափով, այլ տափաստան-  
ներով, — ճանապարհը կարճացնելու համար։

### 3.

Դիմացը կովկասն եր։

Վորքան մոտենում ելին Թիֆլիսին, այնքան  
ավելի՝ Շաքրոն դառնում եր սառը և անհյուրըն։

կալ։ Որ որի վրա նու դառնում եր ավելի և ա-  
վելի մռայլ և Ալլոշալի վրա նայում եր տարո-  
բինակ կերպով Մի անգամ սակայն, յերբ նրանք  
անցան Դարձալի կիրճը, նա սկսեց խոսել։

— Յերկու որ կանցնի — Թիֆլիս կհասնենք։  
Կզնամ տուն։ — Ուր ելիր։ Ճանապարհորդում ելի։  
Բաղնիք կզնամ։ Ահա կասեմ հորս — ներիր ինձ։  
Մի բոլ կուտեմ։ Մորս կասեմ — շատ եմ ուզում  
ուտել։ Յես շատ վշտեր եմ տեսել։ — ամեն տե-  
սակի կյանք Բոսլակները շատ լավ մարդիկ են։  
Հանդիպելիս միշտ մանեթանոց կտամ, դուքան  
կտանեմ, կասեմ՝ գինի խմիր, յես ինքս ել եմ  
բոսլակ յեղել։ Հորս կասեմ քո մասին։ — ահա մի  
մարդ, վոր յեղել ե ինձ համար վորպես յեղբայր։  
Սովորեցրել ե ինձ... կերակրել ե։ Հիմի, կասեմ,  
դրա փոխարեն դու նրան կերակրիր։ Մի տարի  
կերակրիր։ ահա թե ինչքան։ Լսում ես, Ալեքսել։

Ալլոշան սիրում եր, յերբ նա խոսում եր։  
Ալլ ժամանակ նա վերածվում եր ինչ վոր ման-  
կական պարզության։ Ալլ ճառերն ավելի հետա-  
քրքիր ելին դառնում, վորովհետև Թիֆլիսում նա  
չուներ վոչ մի ծանոթ մարդ, իսկ ձմեռը մոտե-  
նում եր։ Ալլոշան հույսը դրել եր Շաքրովի վրա։  
Գնում ելին արագ։ Ահա Մցիսեթը։ Վաղը՝  
Թիֆլիս։

Հանկարծ Շաքրոն խոսեց։

— Դու կարծում ես, թե լես, վրացի ազնվականս, իմ քաղաքը կդնամ ցերեկնվ, այսպես պատառոտված, ցեխոտված։ Զե. մենք կսպասենք յերեկոյին։ Կաց։

Նստեցին ինչ-վոր դատարկ շենքի պատի տակ և փաթաթելով վերջին ծխախոտները, ցրտից դողալով, սկսեցին ծխել։ Ծաղմավիրականն ճանապարհից փչում եր ցուրտ և սուր քամի։ Շաքրոն նստել եր և ատամների արանքից յերգում եր ինչ-վոր տխուր յերգ։ Ալլոշան մտածում եր տաք սենյակի և ուրիշ նման բաների մասին։

— Գնանք, — ասավ Շաքրոն վճռական դեմքով, տեղից բարձրանալով։

Մթնել եր։

— Լսիր, — ասաց Շաքրոն, — զու տուր ինձ այդ բաշլուղը, վորպեսզի լես գեմքս ծածկեմ, ապա թե վոչ՝ ծանոթներս կարող են ինձ ճանաչել։

Ալլոշան տվեց բաշլուղը։ Ընկերները զնում ելին Ոլլգինյան փողոցով։

— Աեքսել, տեսնում ես ձիաքարշի կայարանը, Վերալի կամուրջը։ Նստիր այդտեղ, սպասիր։ Խնզրեմ, սպասիր։ Յես կմտնեմ մի տուն, կհարցնեմ ընկերոջս մերոնց մասին, հորս մորս…

— Չուշանաս։

— Այս ըովելիս։ Մի ըովե։

Նա արագ թեքվից դեպի ինչ-վոր մութ և  
նեղ նըբանցք և անհալտացավ ընդմիշտ:

Ալլոշան ազես յերբեք չհանդիպեց այդ մար-  
դուն, վորը յեղել եր իր ուղեկիցը՝ համարտ  
չորս ամիս:

Ալլոշան քսանմեկ տարեկան եր: Նա շատ  
զրքեր եր կարդացել, շատ մարդկանց եր տե-  
սել, բայց նրա հանդիպումը Շաքրովի հետ՝ ա-  
մենանշանակալիցն՝ եր: Նա սովորեցրեց Ալլոշա-  
յին շատ բան, ինչ վոր չկար գրքերում:

Մնալով մենակ ոտար քաղաքում, Ալլոշան  
տողրում եր, ինչպես կարող եր: Բեռներ եր կը-  
րում, աշխատում եր յերկաթուղու վրա: Նրա  
համար ավելի վատ որեր կդային, յեթե չհանդի-  
պեր Ալեքսանդր Կալլուժնուն, վորը հեղափոխա-  
կան եր, յեղել եր բանտում և աքսորվել եր  
կովկաս և այժմ ծառայում եր յերկաթուղային  
վարչության մեջ: Շարունակ ավելի և ավելի ե-  
լին կանգ առնում նրա աչքերը ջահել բեռնակրի  
վրա: Կալլուժնին մի որ նրան առաջարկեց այ-  
ցելել իրեն, և ահա, Ալլոշան յերկար գիշերնե-  
րով պատմում եր նրան իր արկածները: Կա-  
լլուժնին լպում եր նրան: Իսկ յերբ Ալլոշան  
պատմեց նրան գնչուների հետ իր հանդիպման  
մասին Դունալի ափին, Կալլուժնին վերկացավ  
և տարավ նրան մյուս սենյակը: Հրելով նրան  
ախտեղ, նա դուռը վակեց նրա վրա:

— Անտեղ, սեղանի վրա թուղթ կա, — ասաց նա զարմացած Ալլոշալին դուն ճեղքից: — Դրեցեք այստեղ, ինչ վոր ինձ պատմեցիք: Իսկ քանի գեռ չեք գրել, յես ձեզ բաց չեմ թողնի:

Ալլոշան դժվարանում եր, բայց կալուժնին նույնիսկ լսել չեր ուղում, մինչև վոր պատմվածքը պատրաստ չեղավ:

Հետեւալ որն Ալլոշան դանվում եր Թիֆլիսի «Կովկաս» լրագրի խմբագրատանը: Նրա տուջե, սեղանի յետեւմ նստել եր խմբագիրը, — մի լրար ծերունի, վոսկե ակնոցներով: Նա ուշադրությամբ կարդում եր «Մակար Զուդրա» պատմվածքը:

— Այսպես... — ասաց խմբագիրը, ընթերցումը վերջացնելով և զարմացած նայելով ճեղինակին: — Այսպես, — կրկնեց նա մտածելու: — Այնուամենայնիվ, այստեղ սառըագրություն չկա: Պետք ե ստորագրել: Ի՞նչպես ստորագրել: Ո՞վ եք դուք:

Ո՞վ ե նա: Ալլոշան մտածեց, ուզեց ինչ վոր բան ասել, ապա տասանվեց և վերջապես, ձեռքը թափահարելով, վճռական տոնով ասաց.

— Լավ: Ստորագրեցեք այսպես. — Գորկի (դառն): Մաքսիմ Գորկի:

Խմբագիրը գրեց: Հետո ձեռագրի վերելի ձախ անկյունում գրեց. — Շարել:

ԱՏԵՍԵՑ ՀՈՅԴ  
(Անգլիա)

Լ Ա Վ Ա

Զորջ Նեպյերը մեջքն ուղղեց, ձեռքով քըրտինքը սրբեց ճակատից, թողնելով նրա վրա կեղաստ հետք և ահով ու անթարթ նայեց Զո Ֆորդի մոայլ ֆիզուրալին, վոր աշխատում եր կողքին:

Զուլարանի կտուրի խիտ ստվերն ամպի պես կախվել եր նրանց վրա. արհեստանոցի ողը հագեցած եր կծու ծխով և փոշու ամպով։ Նրանց գլխների վրա, յետեռում և առջեռում, բարակ ոելսերով շարժվում ելին ծանրություն բարձրացնող մեքենաները։ Բանվորների յերկու կողմերում, տասներկու ողամուրճերից ողը դուրս եր թռչում յերկար և սուր շաչյունով, իսկ նրանցից տասներկու քայլ յետ՝ կրճում, փնչում, դղրդում ելին վիթխարի, ավազաքար փշրող մեքենաները։

Այնուր, նրանց շուրջը գործարանը յեռում եր գործնական կյանքով, իր աղմուկի մեջ խլացնելով ամեն ինչ։

Բայց այդ ըստին, Նեպիերին ու Ֆորդին  
թվում եր, թե միայն իրենք յերկուսն են, Նրանք  
չելին նկատում վոչ հրեշտին դղիրզը, վոչ ել  
աշխատանքի լարված տեսնպը:

Զոլի գեմքը դաժան եր և անհրապուլը,  
նրա աչքերը, վոր սկեռված ելին դեղի արհես-  
տանոցի աղօտ կիսամութը, թվում ելին արյու-  
նով լցված։ Նա չեր քնել այդ գիշեր և նրա ծուռ  
կող ունեցող մարմինը, խղճալիորեն վերև թեք-  
ված ուսով, կորցրել եր իր ճկունությունը։ Յու-  
րաքանչյուր նոր հարվածից առաջ նա սառչում  
եր իր տեղում, կարծես մտածում եր, նախքան  
հարվածը հասցնելը։ Պինդ սեղմած շրթունքներն  
ուժեղացնում ելին մռայլ փակվածության տպա-  
վորությունը։

Յեկայի այն բողեն, վորը նկատի ուներ և  
վորին այնպիսի բերկրանքով սպասում եր Զոր-  
ջը։ — բոպե, յերը Զոլի ամոթաբեր շղթաները  
պետք ե ընկնելին և աղատելին իրեն։ Բայց յերը  
Զորջը հայտնվեց նրա դիմաց, դեմ առ գեմ, դը-  
րությունը յերեաց ավելի շատ լուրջ և ավելի  
քիչ հուսալի, ինչպես նա յենթաղրում եր։ Զոր-  
ջի առաջ կանգնած եր մի հարց։ — իրենց սերտ  
բարեկամությունն ավելի ուժեղ կլինի այն հի-  
մար սիրուց, վորը տիրապետել եր Զոլին, թէ  
իրենց բարեկամությունը փորձության չի դիմա-

նա և կիսդվիր Մի բողե նա տանանվեց և մուացվեց: Մի շաբաթում, վորի ընթագքում Զորջն անցկացնում եր իր ծրագիրը, ընկերների միջն կազմվել և աճել եր խորթացում: Այդ խորթացումը Զորջին խղճի խալթ եր պատճառում և բարդացնում եր նրա ծրագիրը: Գիտակցելով, վոր տատանման լուրաքանչչուր բոպեն ավելացնում ե իր անվճռականությունը, Նեպյերը մի քայլ արավ գեղի առաջ և ձեռքը գրեց Զորի ուսի վրա:

— Հսիր, — առավ նա, — դու ի՞նչ ես մտածում յերեկ իրիկվա մասին:

Զոն լուռ եր: Առաջվա պես նրա աչքերը սեեւված ելին գեղի արհեստանոցի խավարը, կարծես վոչինչ չեր լսում:

— Զոն, — բղավեց Զորջը, — Զոն: Յես ուզում եմ քեզ բացատրել թե ինչու յերեկ յերեկուան յես Ռոզալի հետ ելի:

— Այո, — դանդաղ արտասանեց Զոն: Յերեկ դու յեղել ես Ռոզալի հետ: Այդ բանն ինձ լավ հայտնի յե:

Նրա ձեռքերը սեղմվեցին մուրճի կոթին և մարմնի մկանները լարվեցին:

— Զոն, լսիր, յես...

— Յեվ յերեկ և անցյալ որը, — լուրաքանչչուր յերեկո... — ընդհատեց Զոն, խոսքերն ասե-

լով դահղաղ, նույն խուլ, միալտը ձախով: — Նա  
այժմ չի լիլ խոսում ինձ հետ: Այժմ նա զրա  
կարիքը չունի:

Անհույս հիասթափությունը, վոր հնչում եր  
նրա ձախի մեջ, Զորջի սիրտը հիվանդագին  
կերպով սեղմեց:

Ինչու համար լերբեմն մարդկանց պատճա-  
ռում են այդպիսի դիվալին վշտեր: Իր ամբողջ  
կյանքում Զոն շատ քիչ բերկրանք ե տեսել:  
Մարմնական խեղությունը և տնալին ծանր կտ-  
ցությունը թունավորել են նրա գոլությունը:  
Իր այլանդակ լինելու գիտակցումից Զոլի մեջ  
տարեցտարի աճում եր հիվանդագին ինքնասի-  
րությունը, փակվածությունը և մոալլությունը:

Իրենց բարեկամության հիշողությունները  
պաշարեցին Զորջին: Սկզբում՝ դպրոցական տա-  
րիները, լերբ Զոլին պաշտպանելով դաժան թե-  
թեամտությունից և ծաղրանքներից, նա հաճախ  
ստիպված եր լինում ուրիշների հետ կռվել: Հե-  
տո՝ միայնակ զբոսանքները դետի տաք ափերով,  
դեպի վորտեղ Զոն փախչում եր ամբոխի կա-  
րեկցող հայացքներից, հարբած հոր գաղանու-  
թյուններից և կռվասեր մոր պատրվակներից:  
Նա հիշեց իրենց լերկար զրուցները, փորտեղ  
ինքը փորձում եր Զոլին համոզել նրանում, վոր  
աշխարհը շատ քիչ ե հետաքրքրվում իր մարմ:

նական խեղաթլուրությամբ, և վոր ամեն մարդ,  
ըստ իր ներքին արժանիքների, կարող ե կյան-  
քում գտնել իր համապատասխան տեղը: Ի պա-  
տասխան իր ընկերոջ ջերմագին ճառի՝ Զոն  
ժպառում եր, բայց ելի շարունակում եր աշխար-  
հին վերաբերվել նախկին սառը թշնամանքով:  
Նրա միայնակ և ինքնախորացած գոյության  
մեջ շատ վիշտ կար: Յեվ ահա, յերբ Զոլին վեր-  
ջապես սկսեց թվալ, վոր իրեն ել և բախտից  
բաժին ընկել, վորը մատչելի յե մյուս մարդ-  
կանց, — սատանալի ինչ բերմունքով, հատկապես  
ինքն և վերցրել իր վրա՝ ընկերոջը խարեյու-  
թյունների աշխարհից գուրս հանելու խնդիրը:

Բայց Զորջն իրենից վանեց այդ միաքը:  
Նա, հատկապես նա, Զոլի միակ ընկերը, պետք  
ե տպացուցի նրան, թե իրոք, ինչպիսին ե այդ  
աղջիկը: Այդ անհրաժեշտ ե անել հենց հիմա,  
վորպեսզի աղատի նրան այն տանջանքից, վորը  
հետո, իբրև վատ պալար, կարող ե սպառնալիք  
դառնալ նրա ամբողջ կյանքին: Թող ավելի լավ  
ե այդ ծանր վիրահատությունն անի ընկերոջ  
ձեռքը, քան ձեռքը մի ոտար մարդու:

— Մի տանջիր քեզ դրա համար, Զո, —  
մեղմ ասաց նա: — Տեսնում ես...

Զոն արագ շրջվեց և դողացող ձեռքով բըռ-  
նեց ձնուալ:

— Դու, միայն դու ելիք մնացել իմ գլխին  
խորհուրդներ կարգացող։ Սատանան տանիք քեզ, —  
բղավեց նա։ — Դեռ քիչ ե այն, վոր նրան խլե-  
ցիք ինձանից։ Անիծված լինեաւ Դեռ ուզում ես  
ծիծաղել ինձ վրա

Մրի հաստ շերտի տակ, Զորջը կարմրեց  
մինչև մազերի ծալը։

— Դու չես հասկանում, թե ինչ ես ա-  
սում, — գառնորեն պատասխանեց նա։ — Սա ծաղր  
չե, այլ միայն խղճահարություն։

Զոն նորից ընդհատեց նրան իր վիթխարի  
ձեռքերի վայրենի շարժումով։ Նրա աչքերը  
փացեցին կատաղությամբ։

— Խղճահարություն, խղճահարություն։ Ին-  
չիս համար ե քո խղճահարությունը։ Ներողա-  
մառնություն հայցելու համար գես ու գեն մի  
ընկնիք։ Յես քեզ չեմ մեղադրում այն բանի  
համար, վոր զու նրան սիրել ես։ Նա մեղավոր  
չե, յեթե զու, անիծված Հուգա, նպատակ ես  
զրել նրան ձեռք բերել։ Քեզ համար դա դժվար  
չեր — նրան խլել ինձանից։ Դրա համար զու  
գես ու գեն ընկնելու կարիք չունելիք։ Զե՞ մի.  
չե վոր զու սպորտումեն ես և վոչ թե մի այն-  
պիսի խեղանդամ, ինչպես յես։

— Լոմիք, Զօ, լոմիք, — բղավեց Զորջը։

Բայց Զոն մի քայլ արեց դեպի առաջ և  
շարունակեց։

— Նայելով քեզ; վոչվոք չի ցավակցի: Քեզ  
չեն ասի, վոր քեզ պետք եր ճզմել ծնված ժա-  
մանակ: Քո լուսանկարդ տպագրում են լրագրե-  
րում, մակագրելով. «Զորջ Նեպիեր, վազքի  
չեմպիոն, քաղաքի համար այնքան փառք վաս-  
տակող. նկարված իր ընկերոջ՝ խեղանդամ Զո-  
ֆորդի հետ»: Քեզ մնում ե միայն շարժել մատդ,  
և քաղաքի ուղաձղ աղջիկը բոնը կլինի: Դու  
չափազանց լավ դիտես այդ, բայց քեզ հարկա-  
վոր եր հատկապես Ռոզան: Յես քեզ չեմ մե-  
ղադրում այն բանի համար, վոր դու նրան ցան-  
կացար: Անիծված: Ինչու դու չմտածեցիր մեր  
բարեկամության մասին: Խղճիւմ ես: Խազ: Դու  
ունես հարյուրավոր ընկերներ: Իսկ յես ունելի  
միայն քեզ: Դու կարող ելիք ձեռք բերել բոլոր  
աղջիկներին, վոր նց ցանկանալիք: Իսկ յես ու-  
նելի միայն մեկին: Յեվ դու հափշտակեցիր ին-  
ձանից, խեցիր Ռոզալին և ընկերոջս:

Նրա ձայնը խզվեց և ձեռքերն անոգնական  
կախվեցին մարմնի կողքերով: Նա շւռու յեկավ:  
Արցունքներն այրում եին Զորին. նրա սեղմված  
շրթունքներն սպիտակել եին և նա վերջին ճի-  
պերն եր անում:

— Զո, ախր նա պոռնիկ ե ..

— Պոռնիկ... այդ դու յես նրան արել այդ-  
պիսին, — հեծեծաց Զոն:

Նրան պաշարեց կատաղությունը։ Նա դատկեց, կժկվեց և կկպչեր Զորջի կոկորդին, լեթեայդ ըռալելին չհայտնվեր մի բանվոր, ավագի սալակով։ Նա չնկատեց նրանց՝ գործարանալին դժոխքի ծխի և շառաչչունի միջեւ և իր սալակով կանգնեց նեպյերի և Ֆորդի մեջտեղը։

— Նու, շող ե այստեղ, տղերք, — ասավ նա մտերմորեն։

Սալլակը փակեց Զոլի ճանապարհը։ Խոչ մոնչալով, նա քացի տվեց և սալլակը շրջեց կողքի վրա։

— Ինչումն ե բանը, — ահաբեկված և զարմացած հարցըրեց բանվորը։

Զոն լուեց, աչքերով կլանելով Զորջի լարված ֆիգուրան։

Բանվորը, հայացքը շրջելով մեկից մլուսին, արագորեն պատկերացրեց, թե ինչումն ե բանը և ուղում եր արդեն զնալ, բայց Զորջը շուռյեկավ կրնկի վրա և գնաց դեպի անցքը։ Զոն, իր տեղում սառած, նայում եր նրա յետեից, մինչև վոր նա ծածկվեց յերկաթի կտորտանքների կուլտի յետեում։ Բանվորն անշնորք կերպով փոխում եր մի կամ մլուս վոտը։ Նրան անհանգստացնում եր սալլակի դրությունը բայց Զոլի դաժան դեմքը նրան պահում եր իր տեղում։

Հանկարծակի, Զոն բոնվեց վալրենի քրքի-

Ջի այնպիսի բռնկումով, վոր բանվորն իր տեղից ցատկեց, կարծես նրան ինչ-վ ը բանով մարտկեցին:

— Հեռացիր ավագիդ հետ,—բղավեց Զո՞ն նրան և կաղալով գնաց դեպի իր աշխատանքը:

Դուրս դալով դեպի մաքուր ոդ, Զո՞րջն զգաց սարսափելի վիշտ և հոգեկան ցափ: Ինչպիսի անորոշություն, ինչպիսի շփոթություն: Ինչքան հիմարն ե ինքը: Նա վոչ միայն մազաշափ չողնեց Զո՞րին, այլ ընդհակառակը, կսկծացը եց նրա հոգու խոր վերքը: Այժմ ի՞նչ ե մնում իրեն անել: Միայն սպասել և Զո՞րին թողնել, վոր ինքը մենակ վերապրի իր վշտերը...

\* \* \*

Յերեկոյան դեմ, աշխատանքը վերջացնելով, մի խումբ կաղապար անողներ և սեադործ բանվորներ հանգստությամբ շունչ քաշեցին:

— Վերջապես, սատանան տանի, ամեն ինչ պատրաստ ե, — ասեց նրանցից մեկը:

— Տոմմի, ապա թոփի Գարըիսոնի լետեից:

Աշակերտը, բողոքի նման ինչ-վոր բան մըթմըթալով, գնաց, և մոտ տաս ըոպելից հետո, դեպի բանվորները լեկագ Գարըիսոնը:

— Նու, ամեն ինչ կարգին ե, -- հարցըց նա, դիմելով Զո՞րջին, վորը դեկավարում եր աշխատանքները:

— Այս, — պատասխանեց Զորջը:

— Անցքերը փակվմծ են:

— Ինչպես վոր պետքն եւ:

— Լավ, — քաջալերեց Գարրիսոնը: Նա միքանի անգամ շրջեց կաղապարի շուրջը, սուրհայացքով կլանելով նրան և ձեռքերով շոշափելով յերկաթե ամրացուցիչները, վորոնք դրված ելին կաղապարի վրա ամեն կողմից նրա համար, վորովեսզի կաղապարի պատերը միքանի տոնն հալված յերկաթի ճնշման ժամանակ պայթյունից պաշտպանվեն:

— Այս ամրացուցիչներից միքանիսն այնքան ել դիմացկուն չեն:

— Միանգամայն հուսալի յեն, — հանգստացրեց Զորջը:

— Լավ: Լսիր, — դիմեց Գարրիսոնը Զորին, վոր իր կողքին կանգնել եր: — Գնա և նորից ըստուղիր: մեզ դժբախտ դեպքեր հարկավոր չեն: Իսկ մենք, — ասավ նա, դառնալով դեպի Զորջը, — կարող ենք հալոցքի դուրս թափումն սկսել: Դու կվերցնես այդ ծալըից, իսկ յես՝ այս: Առաջինը կսկսեմ յես: Ել, սցեպշչիկ, թիակները տուրայտեղ:

— Լսում եմ, — յենթարկվեց Զորջը, գնալով դեպի վագրանկահնոցը:

Այն ժամանակ, յերբ թիակները բարձրաւ

ցան ողի մեջ, Զո Թորդը, վարպետի հրամանը  
կատարելով, նայում եր կաղապարն ու կանալ-  
ները: Ստուգելով սմբացուցիչների դիմացկու-  
նությունը, նա ծանր մուրճով մի վերջին հար-  
ված հասցրեց նրանց:

Զոն թեքվեց այն կանալի վրա, վորի միջով,  
վեց ֆուտ բարձրությունից, մետաղը պետք է  
դուրս ածեր Զորջը: Նա նկատեց մի բան, վորից  
մի վալրկան նրա սիրտը կանդ տռավ իսկ ու-  
ղեղում առաջացավ մի վալրենի, սարսափելի  
միտք, վրեժինդրության մասին: Կանալի քարե-  
դարավածքում,—այն տեղում, ուր պահեստը մի-  
անում ե կանալի խողովակի հետ,—կար ճեղք-  
վածք: Այդ կարելի լեռ նկատել միայն ներքենից:  
Զոն նայեց շուրջը: Բոլոր ներկա լեզողների  
հայացքները սևեռված ելին մոտեցող թիակին:  
Զոն արագ պտտացրեց մուրճը և փոխանակ նրա  
վոր իջեցներ ամբացուցիչի վրա, ուժեղ հարվա-  
ծեց կանալի պատին: Ճեղքը լայնացավ և կա-  
նալի պահեստը տատանվեց ու ցնցվեց:

— Այդ արժանի լե նրա ծառալությանը,—  
մռալորեն ասավ նա ինքնիրեն և գցելով մուր-  
ճը, գնաց մի կողմ: Թիակները մոտեցան և  
կանգնեցին:

Կանալների վերևի ծալրերն ամբացված ե-  
լին գետնից բավական բարձր և նրա միջով

հոսող մետաղին հետևելու համար, Գարըիսոնն ու Զորջն ստիպված ելին կանգնել փայտալա և բավականին խախուտ կոճղերի վրա:

Վարպետը, բաց անելով նախազգուշական դանակը, գլխով արեց յերկու բանվորների, վորոնք ղեկավարում ելին թիտկը թեքող մեխանիզմը: Դանդաղ, մեծագույն դգուշությամբ, թիտկի քիթը թեքվում եր ավելի ու ավելի ներքի: Վերջապես, հալված մետաղի բարակ, սողիտակ հոսանքը ճեղքեց ձուլարանի կիսախավարը: Նրա անտանելի տաքությունն ստիպեց Գարըիսոնին, ձեռքերով յերեսը ծածկել: Կրակի հոսանքը յուրաքանչյուր ակնթարթ դառնում եր ավելի լախ և ուժեղ: Մի ըոպե թվաց, թե դժոխքի ամբողջ բոցը լցվել ե կանալի պահեստի հարթ ամանը: Լցնելով նրան մինչև բերանը, հալված մետաղը կանալով ուրախ նետվեց դեպի գետնի խորքը: Հալոց շի դուրս ածումն սկսվեց:

Գարըիսոնը տեսնելով, վոր շիկացած հեղեղ թագնվեց «Պարբասներում», - բդավեց Զորջին:

— Սկսիր:

Զորջ նեպյերը նույնպես հրեց նախազգուշական դռնակը և գլխով արեց իր ոգնականներին:

Յերկրորդ թիտկն սկսեց ծանրակշիռ կերպով պտտվել իր սոնակի շուրջը՝ այն ժամանակ,

մերբ բանվորները, առանց վորևե ջանքի, պատացնում ելին անխվը։ Հալված զանգվածը դանդաղ բարձրացավ դեպի քիթը, մի ըստե՛ կանդնեց, կարծես տառանվերով ապա սկսեց հոսել բարակ, անհաստատ հոսանքով։

Այդ ժամանակ, ձուլարանը համարյա ամբողջովին խորասուզվեց մթության մեջ։ Բարձրում, անմիջապես առաստաղի տակ կախված կամարածե լամպերը շաշում ելին և աղմկում, բայց նրանց պղտոր լույսը համարյա չեր համսում կաղապարին։ Կաղապարի շուրջն ընկել ելին խորը ստվերներ իսկ կանալի պահեստը, լցված հալված մետաղով, պայծառ ցոլք եր նետում Զորջի և վարպետի դեմքերին։ Լույսի և ստվերների հրաշալի խաղից, նրանց դեմքերը հրեշներ ելին թվում. դեմքերի գուրս պրծած մասերը պայծառ կերպով լուսավորված ելին իսկ աշքերը, շրթունքների ծալքերը, քունքերը և ծնոտները խորասուզվել ելին խորը խավարի մեջ։

Լարելով իր տեսողությունը մինչև ծայր տափական, Զոն նայեց կանալին, վորը ծածկված եր իրենից Զորջի մարմնով. նա զգաց, թե ինչպես կտրվում ե իր շնչառությունը և ինչպես խփում են քունքերը։ Կանալը տեղի տվեց։ Հաղիվ նկատելի, բայց անկասկած տեղի տվեց. — հոսանքն ինչքան ուժեղանում եր, ճեղքն այնքան լայնա-

նում եր: Կդիմանսմ կանալը, թե վոչ... ի՞նչպես  
իմանալ... Յեթև դիմանա, ուրեմն ինքը՝ Զոն,  
կզրկվի ամեն ինչից նրա վրեժը, — մոտիկ, որի-  
նավոր վրեժը տեղի չի ունենա...

Այդ միաքը և տանջող անորոշությունն ան-  
տանելի ելին: Զոն սեղմեց բռունցքները և նրա  
յեղունկները, համարյա մինչև արյունոտելու աս-  
տիճան՝ խըվեցին ափերի մեջ:

Հանկարծ սցեպշիկը, վոր կանգնած եր մի  
կողմում, ձեռքի արագ շարժումով քշեց իր քթի  
վրա նստած ճանճին: Մանրոցաբարձ մեքենալի  
մեքենավարն ալդ շարժումը նկատեց քսան ֆուտ  
բարձրությունից և ընդունեց ազդանշանի տեղ:  
Միայն սցեպշիկն եր զեկավարում ծանրոցաբարձ  
մեքենալի շարժումները: Տեսնելով ազդանշանը,  
մեքենավարը դեկը դարձրեց և ծանրոցաբարձը՝ աղ-  
մուկով ու շաշտումով, թեքված թիակը հրեց վեց  
դյույմ դեպի կանալը: Սցեպշիկի կանչերն ու  
հուսահատ շարժումները կանգնեցրին մեքենա-  
վարին, բայց արդեն ուշեր: Թիակը տատանվեց,  
սկզբում լեռ ցատկեց, բայց անմիջապես առաջ  
պրծավ, հալված մետաղի հսկալական դանդվածը  
թափելով կանալի ամանը: Աղյուսի դարսվածքը  
չդիմացավ նոր ուժեղ հոսանքի խորտակող թա-  
փին: Լսվեց սուր ճայթյուն, կանալի պահեստը  
շուրջ լեկավ դետնին, ջարդուելով կոթը և վե-

բածելով մանր կտորների: Հալված յերկաթը ցըր-  
վեց ավազե հատակի վրա, դեպի զսնազան կող-  
մեր, սարսափելի և սպառնալի, ինչպես հրաքխա-  
րանի զառիվալը երով թափվող լավալի հեղեղը:  
Կրակի այդ գաղաղած ծովն ուժեղացավ կրակի  
ջրվեժով, վոր ընկնում եր թեքված թիակից:

Յերկու բանվորները, վորոնք ղեկավարում  
եին թիակը թեքող մեխանիզմի անիվը, մի կողմ  
թռան, իրենց կյանքը փրկելու համար: Բայց  
նրանց ձեռքերի՝ ջղաճգական շարժումն անիվին  
նոր պտույտ տվեց, վորից թիակը թեքվեց ավե-  
լի ներքե, դուրս թափելով հալված մետաղի մի  
նոր փոթորկալի հեղեղ:

Զորջը, վոր պատահարար մնացել եր ավսաս,  
կանգնել եր անշարժ, աչքերը շրջելով փշրտված  
կանալից դեպի թիակը և թիակից՝ նորից դեպի  
կանալը: Հասկանալով իրեն սպառնացող վտանգը,  
նա արագ շրջվեց, վորպեսզի իր բարձրությու-  
նից ցատկի մի անվտանգ տեղ: Նրա շարժումից  
անհաստատ կոճղը տատանվեց Զորջը սալթաք-  
վեց և հազիվ աղատվեց սարսափելի լիճն ընկնե-  
լուց: Գերմարդկային ճիգերով նա վերականգնեց  
իր հավասարակշռությունը, բայց մահվան սար-  
սափն շտապել եր այդ կարճ ժամանակամիջո-  
ցում շրջապատել նրան ամեն կողմից:

Մահվանից հազիվ աղատվածի ուժեղ նյար-

դալին ցնցումը նրա շարժումները դարձրեց դուստ  
ու վախկուս:

— Թռիք, անխելք հիմար, թռիք, — բղավեց  
նրան բանվորներից մեկը, բայց Զորջը կարծես  
չեր լսում նրան:

Մի կողմում, նրան շրջապատած հեղեղը մի  
փուտից ավելի չեր, բայց Զորջը նույնիսկ թոշե-  
լու փորձ չարեց: Դժգույն և ամբողջ մարմնով  
դողալով, նա կանգնել եր իր կոճղի վրա, թեև  
փայտն արդեն բռնկվել եր: Անտանելի տաքու-  
թլունն անցավ նրա շորերով և պատեց ամբողջ  
մարմինը կրտելի լավացի շերտը լայնանում եր  
լուրտքանչուր վայրկան, փակելով նրա փրկու-  
թյան ճանապարհը:

Ծանրոցաբարձի մեքենավարը, համարլո  
նույնքան ցրված, ինչքան և Զորջը, այնուամե-  
նամնիվ, հասկացավ Զորջին սպառնացող վտան-  
զը: Նա հասկացավ, վոր ինչ գնով ել լինի, պետք  
ե դադարեցնել թիակի միջից մետաղի հետագա  
հոսումը: Ծանրոցաբարձի մեխանիզմի կոթը բըռ-  
նելով, մեքենավարը նրան լետ հըեց: Ծանրոցա-  
բարձն իր բեռով շարժվեց լետ, ձուլաբանի լեր-  
կարությամբ: Կանալներից վեց ֆուտ հեռու,  
կանգնած եր մի բարձր վանդակ, բաղկացած  
իրար վրա դարսված կաղապարների արկղներից:  
Թիակն ուժեղ խփվեց վանդակին, շըջվեց մի

կողմ և ցալտեցրեց հալված մետաղի մի զգալի  
մասը կը ակի ջրվեժը, ողում շիթեր ցալտեցնե-  
լով, թափվեց դեռնին, Զորջից մի ֆուտ հեռու  
և ձուլվեց դեռևս աճող կը ակի ծովի հետ Նրա  
այրող շունչը խանձեց Զորջի ձեռքերի մազերը:  
Շիթերից մեկն ընկավ Նրա վոտքի վրա և ալրեց  
միսը, մինչև վոսկորը: Զորջը վալրենաբար բղա-  
վեց և բանեց սրունքը, Նորից հավասարակշռու-  
թիւնը կորցնելով:

Ինչ վոր բան մտրակեց Զոլի սառուց կը տ-  
րած սրտին: Նա այժմ Զորջի մեջ տեսնում եր  
վոչ թէ դավաճանի և ախոյանի, այլ ընկերոջ,—  
մտերիմ, հին ընկերոջ, վորի կյանքին մահացու  
վտանգ եր սպառնում: Նրան ազատելու համար  
միայն մի յելք կար և կես վալկան ժամանակ:  
Զոլի ոլխով կայծակի արագությամբ անցավ  
փրկության ծրագիրը,—ամեն ինչ, վոր սպառ-  
նում եր հենց իրեն, և... նա առաջ թռավ տ-  
ռանց մի փոքր տատանման: Զոն մտավ յեռա-  
ցող դժոխքը: Այրվածքի խեղդող հոտը լցվեց ողի  
մեջ: Զոն դեռ պետք ե անցներ յերկու յարդ,  
կը ակի զանդվածի միջով:

Յերբ նա վերջապես հասավ Զորջին, Նրա  
վոտնամաններն ամբողջովին ալրվեցին: Յեվս մի  
վալրկան այն բանի համար, վորպեսզի վերցնի  
Զորջին և դնի իր ուսերի վրա: Այրվող մսի և

վոսկորների զարհութելի հոտը հասավ բանվորներին, քարացնելով նրանց համբ սարսափի մեջ։ Կիզիչ ցավը հոշոտում եր Զոյի մարմինը և անդամալուծում ուղեղը։ Իր վրա գործադրելով կամքի մի վերջին, հուսահատ ճիղ, նա իր բեռով յետ նետվեց հարված մետաղի գետով։ Իր ալրված վոտքերի մնացորդները գետնի վրա դրեց և լուռ ընկնելով վար, վերածվեց մի անձի կույտի։ Նրա կողքին փուլեց Զորջը, բղավելով ու կանչելով։

\* \* \*

Մի ամիս անց, Զոն ու Զորջը, իւս-ուսի, նստել ելին ճանապարհի նուռարաններից մեկի վրա։ Զոյի վոտքերը կապկապված ելին և նրա մոտ դրված ելին մի գույղ հենակներ։

Ընկերները կամացուկ խոսակցում ելին։

Քայլերի ուժեղ ձախը մալթերի վրա և բարձր ծիծաղը հարկադրեցին նրանց նայել։ Դեպի նրանց ելին մոտենում մի ջահել մարդ, թեանցուկ արած Ռողալի հետ, վորը սեղմվել եր նրա ուսին։


— Ալլո, — ձախն ավեց նա, անցնելով։ — Գործերդ ի՞նչպես են։ Առողջանում ես։

— Այո, շնորհակալ եմ, պատասխանեց Զոն։

— Դա լավ է, — ասավ նա և անցավ։ Զոն

նայեց նրա լետեկից ծաղրական ժպիտով։ Զորջը  
գլուխը կախեց և դեմքը ծածկեց ձեռքերով։  
— Այդ ի՞նչ ես անում, — հարցրեց Զոն։  
— Յեթե լես չիխելի, դու կունենայիր նրան  
և... վոտքերդ։

Զոն ձեռքը դրեց Զորջի ծնկին։  
— Յես, միենույնն ե, պիտի կորցնելի նրան,  
— ասաց նա։ — Այնինչ, լես դրա փոխարեն նորից  
դտա ընկերոջու։



10  
11  
12  
13

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

b2

- |                                                 |    |
|-------------------------------------------------|----|
| 1. Մ. Գորկի* — Պետքովը (սուսական գրականություն) | 3  |
| 2. Մ. Հալդ — Լավա (անգլիական գրականություն)     | 19 |

---

\* ) Սույն պատմվածքը թարգմանված ե Մ. Գորկու ինքնականագրական ընույթի պատմվածքներից կազմած «Մաքսիմ Գորկու կյանքը» գրքից:



ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0045257

(124)

A 1  
8279

Р А С С К А З Ы

Часть I.



ФЕБР. 15 1940.